Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 9 ՄԵՀԵԿԱՆ 4383 — Հ. Տ 15 ՓԵՏՐՈՒԱՐ 1892 ԹԻՒ 9

ՊԱՆԱՐ

LE DANUBE

ՀԱՆԴԷՍ ԵՕԹՆԵՕՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 ռուպլի թղթադրամ։

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 ռուպլի թղթադրամ։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Ֆրանսերէն լեզուով։

Խմբագրութեանս գրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծրար պէտք է գրկել հետեւեալ հասցէով։

M .S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal " TANOUP "
(BULGARIE) ROUSTCHOUK

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԱՌ ՏԵՂԱՑԻ ԱԶԳԱՑԻՆՍ

Ա.

Նորէն Ռուսճուգի ազգայինք պիտի զայրանան թէ ինչո՞ւ յաճախ իրենց վրայ կը խօսինք, բայց մենք կը պատասխանենք պարզ եւ ժողովրդային մի առակով, ինչ որ աչքի մօտ է, պտի ալ մօտ կը լինի. Ռուսճուգցիք սոյն առակի ճշմարտութեան կը հաւատան, այլ երբ զայն «Դանուբ»ի էջերուն մէջ կարդան կը դադրին այլեւս հաւատալէ, վասնզի քաղաքիս ազգայնոց մեզ դէմ ունեցած առնարդար հակակրութիւն իրենց հաւատքէն աւելի զօրաւոր է, գա մեզ փոյթ չէ, մենք յոյս ունիմք որ մի օր այդ հակակրութիւնը անշուշտ պիտի փոխուի փափաքելի համակրութեան, եւ այդ համակրութիւնը մենք չի պիտի զիջանիմք շողոքորդութեամբ շահելու այլ անկեղծութեամբ եւ ճշմարտախօսութեամբ, գիտնալով որ մեր բռնած ուղղութիւնը շատ դժուար է, մենք որա փորձը մեր աչաց հանդէպ ունիմք, երբ մեր թերթով Պուլկարիոյ Հայ երիտասարդութեան վրայ ճշմարիտ ակնարկներ նետող մի յոդուած հիւրընկալեցինք, տեղւոյս երիտասարդութեան միայն անմիտ մասը բիրտ ու կոշտ միջոցներով մեզի դէմ ելաւ ու յաջողեցաւ իսկ նիւթապէս վնասել, այլ որչափ մեծ է դիտէ՞ք մեր մխիթարութիւնը երբ կը տեսնենք որ այդ երիտասարդութեան հասակացող ու ազնիւ դասակարգը զգաց ընթերցարանի վը պէտքը ու այսօր մեծ ջանքեր կ'ընէ մեր հրաւէրը իրականացնել իր սոյն ազգօգուտ ձեռնարկով, եւ կը հրաւիրեմք մեր ազնիւ քաղաքացիները որ քաջալերեն մեր երիտասարդութեան սոյն անմեղ և օգտակար ձեռնարկը։

Բ.

Ակնկալ մեր «խօսքերուն» Ազնիւ Ռուսճուգցիք ամենուս յայտնի է որ Ազատասէրն Պուլկարիա դաստիարակութեան հարցին ինչ մեծ կարևորութիւն տուած է, և որչափ մի կոկիկ օրէնք տուած է մեր ձեռքը, մեր զաւակները կրթելու համար ըսելով մեզ «դրամ հաւաքէ՛ և կրթէ՛ զաւակներդ և երբ քու մէջէն մի անհատ չ'ուզեր իր կարողութեան չափով դաստիարակութեան լումայն՝ տուրքը տալ ցոյց տուր ինձ ես կատարել կը տամ նրան իր պարտականութիւնը»։ Բայց այդ արդարասէր կառավարութիւնը կարծեմ բնաւ մեզի չրսաւ որ «այդ հաւաքած դրամդ միայն քու արարան սեռիդ ծախսէ ու անդին զրկէ գեղեցիկ սեռը»։ մեր յուզած հարցը իր նորութեանը համար թերևս շատերու ականջին խորթ հնչէ, այլ երբ

այդ չատեր ըսածնիս լաւ խորհին ու դատեն, այն ատեն պիտի ճանաչեն մեր խօսքերու ճշմարտութիւն, և իրենց այդ խորհերու ու դատողութիւններու օժանդակելու համար պարզեմք մեր հայեացքը սոյն հարցի մասին։

Շրջիմք մի անգամ Վառնա, Շումնու, Տօպրիչ, Սիլիստրէ, Ֆիլիպէ են. մէկ խօսքով Պուլկարիոյ ամեն Հայաբնակ քաղաքներն ու՞ր պիտի տեսնեմք որ վարժարանք երկսեռ չեն և հոգաբարձութեան հաւաքած գումարովը չե՞ն մատակարարուիր. սա արդարութիւ՞ն է միթէ Ռուսճուգի իգական սեռի դաստիարակութեան դրամի հոգը թողուլ և ծանրացնել Աղնուուհի խնամակալուհեաց վերայ, որք գիշեր ու ցերեկ մի համեստ պիւտճէ գոյացնելու համար դռնէ 'ի դուռ կը պտտին ու կը ա.քնին, այս կէտը Ռուսճուգցի հայրերուն պատիւ կը բերէ՞, միթէ մեր մեղուաջան խնամակալուհիք այդ ծանր և տաղտկացուցիչ հոգէն ազատ եղած ատեններին չի՞պիտի կարենան կամ փափաքին դպրոցի աղջկանց յատուկ բաժնէն ներս աւելի մեծ ու բարոյական հոգեր ստանձնել, մենք այնպիսի ազգայնոց անգամ հանդիպեցանք այս մի քանի աւուրց մէջ որ այդ խնամակալուհեաց ստանձնած բեռը մի քիչ թեթևցնելու համար տրուած պարահանդէսն անգամ քննադատելու ելած են, և համարձակեցան ըսել թէ՝ «արական սեռի վարժարանը երեսի վրայ թողեր են ու աղջկանց վարժարանը կը հոգան» մենք այս տեսակ խօսքերուն ՝ԷՀ՝Ն կը հոտի ըսելով անցնիմք մի ուրիշ համոզական հաշուի։ Համարենք թէ մի Ռուսճուգցի հայր երկու աղջկան և 2 մանչու հայր լինելով տարին 150 ֆրանք դպրոցական տուրք կը վճարէ, եթէ Ռուսճուգ ունենար այնքան ազգային կալուածներ որ ազգ. դպրոցական տուրքի պէտք չի զգայուէր, այդ հայրը իր 150 ֆրանքը ու՞ր պիտի ծախսէր, բնական է իր տունը ուր հաւասարապէս իր 4 զաւակներն ալ պիտի վայելէին այդ 150 ֆրանքը. ա՛րդ, ի՞նչ արդարութիւն է որ այդ 150 ֆրանքը երբ ազգային մտուկը կը մտնայ, միայն արական սեռի կը յատկանայ որով այդ 2 աղջկանց մայրը կը պարտաւորի իր ուրիշ ծախքերէն խնայել (կամ ճիշտը խօսելով) խնամակալուհեաց ջանքերուն անտարբեր չի գտնուելու համար իր ամուսնոյն հետ կծու կամ քաղցր մի հակաճառութեան բռնուիլ ամեն ամիս կամ ամեն շաբաթ։

Այս տարի մեր նախորդ տարիներէ աւելի հարուստ մի դաստիարակութեան պիւտճէ ունենալնք հնարհիւ «թէվզի քոմիսիոն»ի (երանի թէ թղթի վրայ գրուածը իրականանար) այսինքն տարին 7200 ֆրանքի հատոց, այդ գումարէն ամսական 200 ֆրանք չե՞մք կարող միթէ յատկացնել մեր աղջկանց դաստիարակութեան համար, մեր քիչ մ՚առաջ պարզած մտադրութեամբ, կրնամք եթէ կ՚ունենամք, խնդրեմք թող չի պակսի մեզ՝ էն այդ կամքը եթէ կ՚ուզեմք ապադարասէր լինիլ, մեր այս յուզած հարցը թերևս իր դէմ սա առարկութիւնը հանէ թէ «մենք հոս չ՚ունիմք երկսեռ մի վարժարան կազմելու յարմար մի դպրոցական շէնք»։ մենք գրելէ և պարզելէ փախուստ չեմք տար երբ հարցը ազգին յառաջադիմութեան կը վերաբերի։ Ազատ Պուլկարիոյ ժողովրդասէր կառավարութիւնը մեզի մի ձրի դեսին հնարհելու պատրաստ է (եթէ մեր կողմանէ խնդրուի) մի դպրոց կանգնելու համար. եթէ խորհիմք ամսթ է ասել թէ դրամ կը պակսի մեզ 150–200 աշակերտի համար մի դպրոցի շէնք կանգնելու ատեն, ինչո՞ւ, վասն զի 2300 ֆրանք պատրաստի դրամ կայ դպրոցասիրաց ընկերութեան անխոնջ ջանից հնարհիւ նոյն չափ ալ մի գումար աղջկանց վարժարանի նախորդ հոգաբարձութեան մօտ. երկար տարիներէ 'ի վեր Աղքատասիրաց ընկերութիւնը դովելի ջանքով ազգէն դրամ կը հաւաքէ. թող այդ ընկերութիւնը համոզուի որ եթէ 1700 ֆրանք տայ իր նպատակէն շեղած չըլլար. քանի որ այդ շէնքին մէջ ազքատի զաւակներն ալ պիտի կրթուին, տեղս խնայողական մի ընկերութիւն կայ որոյ կանոնագրութեան ոգւոյն հակառակ չէ եթէ 1500 ֆրանք մի գումար կանխավճար ընէ ապագային իր ազգին ընելիք 0/0ին 20 նպաստին 'ի հաշիւ. քաղքիս Հայ երիտասարդք ևս ջանք ընեն լաւ մի թատերական ներկայացում տալու յարմէ 500 ֆրանք անկարելի է որ չի գոյանայ որով կ՚ունենամք 6000 ֆրանքի մօտ մի կլորիկ գումար և այդ գումարով կարող եմք սկսել գործի և ձեռնառկել վարժարանի կառուցման. գիտեմք որ այսչափ գումարով չեմք կարող վերջացնել մեր գործ. բայց երբ գործը կիսակատար մնայ այն ատեն պիտի զգամք և սիրով ձեռնարկել հանգանակութեան և մեր դրացի քաղաքացի ազգայինք ալ անտարբեր չի մնալով սիրով պիտի օգնեն մեզ. և ու՞ր կառուցանել վարժարանը. իրարմէ հեռի երկու հայ թաղերու ճիշդ մէջ տեղը ուր ձմեռուան եղանակին երթևեկութեան համար

դժուարութիւնք ալ պիտի վերնան, թողունք ա-նուանական պատիւը մէկ կողմ, երբ խորհիմք ազ-գին շահը, երբ մտածեմք մեր զաւակները, երբ մի ակնարկ նետեմք մեր յուզած հարցի կարևորու-թեանը վերայ, այն ատեն պէտք չէ որ այս ձեռ-նարկն ընելու համար ո և է ջանք խնայեմք։

Այս օրուան մեր մի քանի խօսքերն այսչափով վերջացնեմք։

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՀԱՄՈԶՄՈՒՆԸՆ ԴԻՊԻ ՏԱՃԿԱ-ՀԱՅԵՐԸ, ՆՐԱՆՑ ՀԱՅԿԱՅՈՂՈՒԹԻՒՆԸ. ԴՈՐԾԵՐԻ ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԹԷ ԻՆՉ ԱՐԵԼ ԵՆ ՏԱՃ-ԿԱՀԱՅԵՐԸ։

(Շարունակութիւն 8դբ թիւէն և վերջ։)

ԺԲ. Տաճկահայ գաւառները օրինակ առնելով Պոլսից եւ հետեւելով նրա հետամուտ են եղել նոյնպէս ուսման եւ դաստիարակութեան, մանաւանդ փոքր Հայքում եւ Կիլիկիայում. — Նիկոմիդիա, Զմիւռնիա, Սեբաստիա, Եւդոկիա, Կեսարիա, Ակն, Արապկիր, Երիզա, Զէյթուն, Կիւրին, Տիվրիկ, Եօզկաթ, Հաճին, Մարաշ, Այնթապ, Չէօք Մէրզիֆոն, Սիս, Ատանայ եւ Տարսոն, որոց մէջ գտնվում են այսօր բաւական զոհացուցիչ վարժարան-ներ եւ որոնց համար ժողովուրդը չի խնայում եւ ոչինչ։

ԺԳ. Տաճկահայերն են եղել նաեւ Հայկական հարցի ստեղծողը. եւ Տաճկահայը վճարել է Եւրոպայ գնացող պատուիրակութեան ծախսը. տասնեակ հազարներ, այն է՛լ ոչ բոլոր ժողովուրդը, այլ մի քանի անձինք, առանց ազմուկի, առանց փոթորկի որպէս անում են — Ռուսա-հայեր մի քանի բուպլիի համար, այլ խաղաղ, անգան-գատ եւ համեստ լռութեամբ. որոց ոմանց անուններն Ռուսահայ մամուլի մէջ դարձեալ սեւահոգի Հայկակնե-րի գրչով անարգ ու կեղտոտ ներկայացուած են։ Այն Հայկի որոց հոգին ու միտքը ապականվել ծայրայեղ ստութիւններով։

ԺԴ. Առաջին անգամ Հայ ազգի գոյութեան վերայ Եւրոպային եւ բոլոր աշխարհի ծանօթութիւն տուողներն եղել են Տաճկահայերը. թէ՛ գտնվում է արեւելքում մի Քրիստոնեայ Ազգ՝ որուն Հայ է ասվում, որը ունի իւր չարունակութիւնը եւ անցեալում նշանակելի գործե-ր ու պատմութիւն։

ԺԵ. Տակաւին Ռուսահայ մամուլի ներկայացուցիչը չը ծնուած կամ օրօրոցում պա՛մ պա՛մ լալիս, եւ Վրա-ցի ծիծմայրի քունը խանդարելիս, Տաճկահայը ունեցել է, ո՛չ միայն Պոլսում, ոչ միայն Իզմիրում, այլ Եւրոպայի կեդրոնում լրագիր ու ամսագիր հրատարակութիւններ. «Բաղմավէպ», «Արեւմուտք», «Եւրոպայ», եւ «Բա-րիզ» անուններով յայտնի ֆրոֆեսանոֆներ. որոնք մինչ օրս էլ ապրում են եւ իրանց ձիւնի նման սիպտակ մազ ու միրուքի ներքեւ գործում են, գրում են. «Փարիզ» լրագրի խմբագիր պ. Աբրահամ Կիլիկեցի Մուրատ պատ-ուելիի որդի. Զարմայրի ուղեալ բարոյալից նամակա հրատարակութեամբ, եւ «Արեւմուտք» եւ «Եւրոպայ» լրագրաց խմբագիր Ստեփան Ոսկան՝ երկար տարիների 'ի վեր հրատարակելով Ֆրանսերէն Բէֆորմ անուն լրագիր, որոց մասին այնքան անծանօթ է Ռուսահայը որ գուցէ առասպել համարուի մեր այս ասածները։

ԺԶ. Եղել են տասնեակ պարբերականք նոյն իսկ Պոլ-սում «Միւնատիի Էրճիաս», «Վարագայի Հավատիս», եւ «Մանզումէի Էֆքեար». Հայատառ Թրքաբարբառ ժողովրդի հասկացած լեզուով, ժողովրդի հետ խօսող լը-րագիր։ Սորանից զատ, զուտ Հայերէն աշխարհիկ բար-բառով եղել են բազմաթիւ հրապարակութիւններ — «Հա-յաստան» ու «Բուրաստան», «Ծաղիկ» ու «Ծիածան», «Մասիս» ու «Արարատ», «Օրագիր» ու «Նորագիր», «Մե-զու» ու «Թատրոն» «Արեւելեան Մամուլ» «Երեւակ» ու «Ժամանակ», «Թռչնիկ» ու «Հայրենիք», «Ասիա» ու «Կիլիկիա»,«Երկրագունտ»«Արշալոյս»«Ցոյս» եւ «Լոյս» որոնք ծառայել են Օսմ. Պէտութեան եւ ազգի շահերի, տարածել են ըստ կարի երկրի ժողովրդական պահանջնե-րի համաձայն լուսաւորութեան եւ մարդավայել կենցա-ղի գաղաբարներ։

ԺԷ. Վենետիկ եւ Վիէննայի Մխիթարեանց կարեւոր հաստատութեանց հիմնադրիչներն եւ նոցա նիւթապէս ու բարոյապէս նպաստողները եղել են դարձեալ Տաճ-կահայեր. սկսած Սեբաստացի Մխիթար վարդապետից, Միքայէլ Զամչեանից, Եդուարդ Հիւբմիւզից, Արսէն Բագ-րատունիից, մինչեւ Մեծն Ղեւոնդ Ալիշան, Հայ պատ-մութեան, Հայ տեղագրութեան ջահանչոյլ գոնարներն։

ԺԸ. Տաճկահայը՝ ծնել է, մեծացրել է, եւ ապրեցրել է հազարաւոր Ազգային բանավար մշակներ, ինքնաուս եւ ինքնաբոյս գործիչներ, գրագետներ, բանաստեղծներ, լեզուաբաններ, խմբագիրներ, պատմաբաններ եւն։ Յով-հան Միրզա Վանանդեցի (քահանայ), Ֆիզիքա, Մուրատ, Փէչտմալճի, Զամուռճի՝ եւ Մոզեան պատուելիներ, Պո-ղոս Նալեան (Պատրիարք), Ներսէս Վարժապետեան (Պատ-րիարք) Մկրտիչ Խրիմեան (Հայրիկ), Խորէն Նարպէյ (քերթող) Գրիգորիս Եպիսկոպոս Այէաթճեան (Թռչնիկ Պեգասեան լրագրի խմբագիր. Եկեղեցական համագումար ժողովոյ ատենապետ). Մատթէոս Իզմիրլեանց, Երեմիա, Գէորգ Արծրունի, Հիւնքէրպէյէնտեան քահանայք, Մար-կոս Աղարէկեան, Յովսէփ Շիշմանեան (Ծերենց) Մկրտիչ Պէշիքթաշլեան, Պետրոս Դուրեան, Արմենակ Հայկունի, Յարութիւն Սրվանձտեան, Մատթէոս Այվատեան, Ճանիկ Արամ, Օգսէն Խոճասարեան, Յովհաննէս Միւհէնտիսեան, Թորոս Նազարեան, Մատթէոս Մամուրեան, Սիմոն Ֆէ-լէկեան, Յակոբ Ոսկան, Տիգրան Մանավ, Կարապետ Իւ-թիւճեան, Գրիգոր Օտեան, Թ. Թէրզեան, Մ. Դարագաշ-եան, Նորայր Բիւզանդացի, Ստեփան Փափազեան, Սիմոն Միքայէլեան, Ռէթէոս Պէրպէրեան, Յ. Գուրգէն, Աղեք-սանդր Փանոսեան, Մելքոն Կիւրճեան, Յ. Սեթեան, Մին-րան Ասքանազ, Գրիգոր Մարգարեան եւն եւն. որոնք ծաղկած ու ծաղկացրած են Հայ լեզուն, Հայ գրակա-նութիւնը, եւ՝ այն էլ ո՛չ թէ Ռուսահայերի պէս գիմնա-զիոնների, համալսարանների եւ այլ տերունական, թան-գարան ու գրադարանների օգնութեամբ, որը որպէս նա-

խաինամութիւն բաց է եղել Ռուսահայերի առջեւ։

ԺԹ. Հայկական երաժշտութիւնը եւ ձայնագրութիւնը՝ որը լարում է մարդուն հոգին ու զգայմունքը, ծաղկացրել, կատարելագործել են դարձեալ Տաճկահայերը, Արիստակէս վարժապետ, Գարրիէլ Երանեան, Նիկողոս Թաշճեան, Պապա Համբարձում, Եղիա Տնտեսեան եւ Տիգրան Չուխաճեան, որոնք հոգի տուել են երգին ու շարականին, կիթառին, քէմանին ու դաշնակին.— ԸՐ ՄԸՐԴԷԿ ԵՐԷ ՀՈՆԷՆ ասած է Շիլլէր։

Ի. Թատրոնական գիրքի մէջ էլ անդրանիկն եղել են Տաճկահայերը, հիմնել են ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ Թատրոն որ այժմ ասվում է Նոր Թատրոն Հայոց Ս. Երրորդութեան եկեղեցւոյ կալված, ուր խաղացել են յաջորդաբար Տիկին Ա. բուսեակ, Տիկին Հրաչեայ, Տիկ. Դարագաշ, Աստղիկ ու Սիրանոյշ. պարոնայք Վարդովեան, Գարեգին Ռըշտունի, Մնակեան, Պապեան, եւ ամենէ վերջինը Պ. Ադամեան որը զմայլացրեց Ռուսաստանը ամբողջ, հին ու նոր բազմաթիւ նուիրուածներ թատրերգական գործին, որոնք կենդանացրել են մոռացուած անցեալը, իրանց սեւ ու ճերմակ պատկերներով. ներկայացրել են «Հայկ Դիւցազն»ը «Արշակ Բ.» «Արայ Գեղեցիկ» «Վարդան Մամիկոնեան» «Մեծն Ներսէս» «Սանդուղդ» եւ այլ շատեր. «աղգանոյշ» ու «աղգահոտ». ամենքն ալ Հայերէն ու հրահանգիչ։

ԻԱ. Աշխատանքներ եղել են նաեւ Վանայ ծովի վերայ չոգենաւ բանեցնելու, եւ արտօնութիւն էլ ստանալուց յետոյ անկախ պատճառներ արգելք դառել են, լ եւ տրուած արտօնութիւնն էլ ետ առնուել։ Ինչպէս նաեւ ճիգեր եղել են գաւառների մէջ դրամատուններ հաստատելու, եւ ժողովուրդը ազատելու տոկոսառուների ձեռքից, եւ չը թողնելու համար որ պանդխտութեան մէջ փճանայ Հայ ազգի թարմ ոյժերը. բայց էլի կամքից անկախ պատճառներ արգելք եղել են գործին եւ խափանել են երկրաչէն մտածմունքներն։

ԻԲ. Տաճկահայը՝ ոչ պակաս զինուորական ոյժ էլ ցոյց տուել է, բոլոր աշխարհի առջեւ. Զէյթունցի լեռնական Հայերը՝ հինգ հարիւր տարիներից 'ի վեր ժառանգական դիւցազնութեամբ սրբացրած են Կիլիկիոյ բարձունքն եւ Տաւրոսի սարերը. դարերի ընթացքում հազարաւոր մարտիրոսների արեամբ պահպանել են մի ամբողջ Կիլիկիայի Հայութեան պ ա ր ծ ա ն։ Հայ ազգութեան, որոց հերոսական քաջագործութեանց ճշգրիտ նըկարագիրն ընդարձակ հատորներու կը կարօտին։

Մի խօսքով Տաճկահայը՝ չը նայելով իրա. շատ ու շատ պակասութիւններին, ինչպէս բնական է ամէն ազգի մանկանացուներին, գործել է եւ էլի գործում է, են թէ՝ մինչեւ օրս՝ արել է այն՝ ինչոր կարողացել է, եւ կամ հանգամանքները թոյլատրած են իրան։ . . . ։

Այսչափը՝ պատեհ ու անպատեհ խօսելուց յետոյ կը թողնենք որ Ռուսահայ ոչոարէմրնէ։ներն էլ իրանք ցոյց տան իրանց առաւելութիւններն, եւ պարապ տեղ չ'օրօրեն մեզի իրանց Տնէ։էշպոական ծրագիրներով. կամ պատճառ չը տան որ, մենք դարձեալ ստիպուինք խօսիլ իրանց մասին էլ, ինչ որ հասկացած ենք եւ ինչ որ 'ի մօտոյ գիտենք։

ՎԷՏԷՐԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍԻԼԻՍՏՐԻ 28 ՅՈՒՆՎԱՐ 1892

(Շարունակութիւն 7րդ թիւին և վերջ)

Պուլկարիոյ և Ռումանիոյ երկիրներու մէջ ունեցած Հայ դպրութեանց դպրոցներու ընդհանրն ալ մինչ այս օր Պոլսոյ դպրոցներու և կրթական ուղղութեամբ ցոլիմ դարան վարժապետներու ձեռքով առաջնորդուած է, որով այն ամէն դպրոցական անաւելութիւնք և յետադիմութիւնք որք բացորոշ կը տեսնուին խեղճ գաւառացի Հայ դպրոցներուն վրայ նոյն բանը և աւելի վատն կը տեսնուի մեր այս դպրութեանց կրթական գործերուն մէջ, ուստի անդրադառնալով մեր բուն խնդրոյն կուզենք հասկցնել մեր դպրական եղբարց թէ մեր դպրոցաց հոգը և կամ այսպէս ասենք մեր գաւակաց կամ եղբարց ապագայի ճակատագրերը որո՞ւ յանձնենք քանի որ այսքան աննպաստ և անուղիղ դրութեան մէջ ներկայացուցինք մեր այժմեան կրթական գործով զբաղող մարմիններն և անհատներն։

1870ի Ֆրանքօ–Գերմանական պատերազմէն վերջ բոլոր աշխարհ ըմբռնեց Գերման ազգի ընդդրկած Մանկավարժական դրութեան առաւելութիւնն ու պիտանութիւնն, և այն թուականէն սկսեալ շատ ազգեր հիմն 'ի վեր տապալեցին իրենց դպրոցական նախնի ծրագրերն ու մեթոդներն, թարգմանելով ընդօրինակելով և 'ի նոյն իսկ 'ի Գերմանիա ուսանողներ ուղարկելով սովրեցան այդ բարձր արհեստը՝ Մանկավարժութիւն և եկան իրենց հայրենի երկիրներու մէջ տարածեցին ու հասկացուցին նրա առաւելութիւնը և օգտակարութիւնը։

Մեր Ռուսահայ եղբայրները 1870էն շատ տարիներ առաջ ըմբռնելով Գերման ազգի դպրոցներու և ծրագրերու ուղղութիւնքն ու առաւելութիւնքն, փոխանակ Տաճկահայերի նման իրենց տղաքներն 'ի Ֆրանսա ուղարկելու 'ի Գերմանիա ուղարկեցին, որոնք այդ երկրի մէջ ո՛չ միայն պարզ ուսանողներու նման շրջան աւարտելով մեկնեցան այլ նոյն իսկ հեղինակութիւններ և փառաւոր անուններ թողով եկան իրենց հայրենի աշխարհը և կերպարանափոխեցին իրենց Տէր Թոդիկական դպրոցներու անկերպարան վիճակը։ Ռուս կառավարութիւնն ալ արդէն ընդդրկած լինելով Գերման դպրոցներու ուղղութիւնքն, աւելի զարկ տուաւ իր հպատակ ազգաց զարգացման մեծ գոր-

ծին որով Ռուսահայերը երկու գլխաւոր նեցուկներով իրենց դպրոցները այնչափ յառաջ տարին որ այսօր այդ դպրոցներէն դուրս եկող պարզ աշակերտ մը կրնամք համարձակիլ ըսել թէ տասը հատ Ցաճկահայ վարժապետի դպրոցի ուղղութիւն և մանկավարժութիւն սովրեցնելու կարողութիւնն ունի, և Ռուսահայերը իրենց դպրոցներու կանոնաւոր ուղղութեամբն այսօր ունեցան հմուտ և կարող գրիչներ ու գործիչներ. Պօլսեցին որ երբեմն պարծենալով կը փքուէր թէ մենք բոլոր 3 միլիոն Հայութեան ոգի տուողն և լուսաւորիչն ենք, այս օր ամօթէն երկու ձեռքերով երեսները պնդգ կը ծածկեն Ռուսահային յառաջադիմութիւնը չի տեսնելու համար. և երբ Ռուսահայեր Ցաճկահայ դաւառներու մէջ դասախօսելու ելած են, մեր յարգելի ուսումնական ժողովոյ անդամք կամ տեղացի մի Տէր Թոդիկ այնպիսի պժգալի դրութեան և հանդամանաց ենթարկած են այդ անձնուէրներին որք գիշերանց թոզեր փախեր են։

Արդ քանի որ խօսքը այժմ Հայ գաղթականութեան մասին է, գաղթական Հայութիւնը թող համոզուի որ իրեն համար ամենափրկարար միջոցն է մեր Ռուսահայ եղբայրներէն ուսուցիչներ և իրենց դպրոցներու համար մանկավարժներ բերել տալ որ կարենայ իւր կրթական մեծ գործը յառաջ տանիլ

Աշնիւ գաղթական Հայեր, կարծեմ ամենքիդ ալ առանց վշտանալու կը խոստովանիք թէ, դուք այսօր Հայերէն չէք խօսիր, նուազ բացառութեամբ, ամենքիդ ալ միշտ օտարաբարբառ էք. Ձեր ընտանեաց քով և Ձեր գործի մէջ. վերջապէս մեծ պզտիկ ալու և էգ այս տխուր հոսանաց մատնուած էք. ուստի երբ կը ջանաք որ գէթ Ձեր զաւակներն Հայերէն խօսին ու սովրին և սրտերնին Հայութեան համար բաբախէ. ընտրեցէք Ձեզ համար կարգին մանկավարժ Հայ ուսուցիչներ, և նամանաւանդ թէ բերկրութեամբ կը յայտարարեմ թէ, ուղղութեանցս մէջ 'ի Պուլկարիա և 'ի Ռումանիա և նոյն իսկ 'ի Սուչաւա մէկ երկու Հայեր ինձ դիտել տուած և հարցուցած են «ինչո՞ւ համար Ցաճկահայերը Ռուսահայոց պէս անուշ և դիւրըմբռնելի չեն գրեր ըսելով օրինակ կը բերեն, յոյժ ողբացեալ Պ. Ռաֆֆիի երկասիրութիւնքն։ Ահա միթէ՞ այս դիտողութիւնք չէ կարելի ապացոյց նկատել թէ Դուք ժողովուրդքդ ինքնաբերաբար Արարատեան բարբառը ու գրականութիւնը նախամեծար համարած էք Ցաճկահայոց բարբառէն ու գրականութենէն. և հաւատացէք որ եթէ Պ. Ռաֆֆի այդ պատուական գործերն Ցաճկահայոց բարբառով գրուած ըլլար, պիտի դառնար «Նեռն կամ աշխարհի վերջը» անուն գիրքն որ կարդացողն երբ կ'ուտատէ կը պարտաւորի իւր ընկերին սա հարցումն ընել «Դուն բան մը հասկցա՞ր»։

Մի գլխաւոր դիւրութիւն ալ ունինք Արարատեան բառբառը կարգին սովրեցնել տալու Ձեր նոր ու մատաղ սերնդեան, քանի դաղթականութեան մէջ Հայ մայրերը 'ի մեծ ցաւ մեր ամենի իրենց կաթին հետ միատեղ Հայ լեզուն չեն ջամբեր Հայ մանկիկին անմեղ շրթները օտար բառեր թոթովելով կը բացուին. և օտարաբարբառ վիճակով Հայ դպրոցի սեռան կը կոխեն և անդ իբր մի նոր լեզու Հայերէն կը սովրին, և գիտցէք որ Հայ լեզուի դիւրութիւնն ու ճկունութիւնն է որ շուտով կը սովրին. և եթէ Հայ լեզուն ալ օտար լեզուներու պէս բիւր այլանդակութիւններ ունենար չպիտի սովրէին. այլ իբր ձանձրացուցիչ և ժամանակակորոյս նկատելով պիտի նեռէին, արդ երևակայեցէք մի անգամ երբ այդ լեզուն դասախօսուի կանոնաւոր Հայ մանկավարժի առաջնորդութեամբ Հայ տղաքներն որչա՞փ ախորժանօք պիտի կարդան և որչափ քիչ ժամանակ պիտի կորուսեն զայն ուսանելու համար։

Ռուսահայ դպրոցներու և ուսուցիչ մանկավարժներու մասին զովեստ խօսիլն կարողութենէն վեր է. միայն անկողմնակալ ոգւով կը յայտարարեմք թէ անհան առաւելութիւններ ունին մեր Ցաճկահայ ուսուցիչներէն նուազ բացառութեամբ 'ի Ցաճկահայս կայ լուրջ և կարող ուսուցիչներ անոնք ալ փոքրաթիւ գաղթականութեան մէջ աշխատելէ յառաջ բազմահայ տեղեր հիմնուած ու հաստատուած են։ Մեր այս ըսածներու ճշմարտութիւնքն այժմ Ցաճկահայերն և Պարսկահայերն ալ ըմբռնել սկսած են, և այժմ տեղ տեղ ալ Ռուսահայ ուսուցիչներ ալ կը գործածուին և շատ տեղեր ալ գործածելու փափաք ունին միայն քաղաքական նկատումներէ կերկնչին։

Աշնիւ գաղթական ազգայինք, ա՜հ, Ձեզ լաւագոյն մինչ յառաջիկայի ուսումնական տարուայ սկիզբներն բաւական ամիսներ կան այդչափ միջոցի մէջ կարող էք դիմել Ռուսահայոց, անոնց հետ բանակցութեան մտնել և համաձայնութիւն գոյացնելէ վերջ կարող և գիտուն մանկավարժ ուսուցիչներու ձեռքով փրկել Ձեր արդի անկերպարան ու խեղճ վարժարաններն ուր Հայ մանուկն փո-

խանակ մտաւորապէս և հմտութեամբ ճոխանալու կը ձգտին ու կը փճանան։

Ընտրութեան համար կարող է.ք դիմել Թիֆլիզի հոգևոր իշխանութեան և հաւատացէ.ք որ ամենայն ուրախութեամբ Ձեզ պիտի պատասխանեն բայց բերաննիդ բանալէ .յառաջ գրպաններնուդ բերանները ալ նախապէս շոշափել մոռնալու չէ.ք։

ԱՐԶՆ

ՊՐԱՒԼԱ 8 ՓԵՏՐ. 1892

ԽՄԲԱԳԻՐ–ՏԷՐ,

Ձեր լրագրոյ 42ը թուոյն մէջ ներփակեալ «Հայ գաղթականութեան վիճակագրական ցուցակ» մը, յորում ամփոփած էի.ք հինգհատան հարցումներ, ձեռ.քս անցաւ պատահմամբ, որ.ք ինչպէս Պուլկարիոյ և Ռումանիոյ Հայաբնակ քաղաքաց, նոյնպէս տեղւոյս Հայ եկեղեցւոյ և գաղթականութեան նը.կատմամբ էին։

Այդ տասնհինգ ամենակարևոր հարցերը կը հաստատեն թէ Ձեր Ա. թուոյն սկզբան պիտի ծառայէ.ք, այսինքն Պուլկարիոյ և Ռումանիոյ Հայոց բարոյական և նիւթական. դիտական և արուեստական. ազգասիրական և օտարասիրական, վերջապէս՝ այս երկու երկրաց մանաւանդ վերջնոյն մէջ բնակեալ Հայոց արդի յաւալի վիճակը երեւան հանելով ջատագովել կամ պախարակել .յառաջադրած է.ք որոյ վասն բերկրութիւնս կանխաւ կը .յայտնեմ։

Ուրախ եմ, կ'ըսեմ, զի այդու Պուլկարիոյ .յետնեալ և Ռումանիոյ կորուսեալ Հայութեան .յառաջդիմութեան ու վերազտմանը շարժառիթ պիտի լինի.ք, նոցա գրգիռ պիտի տայ.ք իբր Հայ ծընիլ, ապրիլ և մեռնիլ. և կենաց այդ ժամանակամիջոցին մէջ Հայութեան պարտուց և իրաւանց և հետևաբար Հայկական զգացմանց տէր լինիլ։

Ա՜խ, երբ երևակայութեանս առաջ կը բերեմ այնպիսի պարագայներ, յորս Ռումանիոյ մէջ ամենարարձր դասակարգի պատկանող Հայ մը (.յարգելի բացառութեամբ) նախատինք կը համարի Հայ անունը կրել .ի ճակատուն, երբ կը .յիշեմ միջնակարգ վաճառական մը որ աւելի փայլուն դրից արժանանալու տենչով կ'անպատուէ Հայութիւնն ու եկեղեցին որոյ ծոցէն է ելած, երբ կը տեսնեմ որ ստորնակարգ Հայերն իսկ կենաց հեշտութիւնները վայելելու համար կը մոռնան իւրեանց բնագաւառը, կանայն ու որդի.քը երբ վերջապէս ամեն դասակարգի պատկանող Հայ.ք (և ինչպէ՞ս Հայ) Հայութենէ զատ ամեն ազգի խառնուրդ են, Հայ են և չ'ունին Հայու անուն և սիրտ. բարեպաշտ կը ձևանան և փոխանակ զիրենք մկրտող Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին .յաճախելու կը դիմեն ուրիշ աղօթատեղիներ, կը նպատեն ո՛չ Հայ վարժարանաց և իւրեանց զաւակունքը կը խրրկեն օտար ազգի ճիմնազիոններ և նախակրթարաններ մոռնալու համար Հայ լեզուն և կրօնն. սրրատէս արիւն կը հասէ այս անտարբերութիւնները տեսնելով։

Զհայութիւն նախատելու պատճառ եղած են մանաւանդ Հայատեաց և կրօնամոլ ցոյն կղերին, որպէս այլուր, նոյնպէս և 'ի Ռումանիա ներշնչած այն վատ զրպարտութիւնները զոր Եաշ բնակող հայրենասէր և քաջ Ռումանագէտ Հայ մը կրցաւ ջրել այն զրպարտութիւնք զոր կ'ուզէին վերագրել Հայ ազգի վրայ. և այդ ազնիւ Հայուն հրաւիրանօք Պուքրէշի ծերակոյտը հաստատեց Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ Ուղղափառ լինելը, այլ աւա՜ղ որ մեր անտարբեր Հայ.ք չ'ուզեցին զրել իւրեանց ճակատուն .յանիրաւի դրոշմուած նախատալի մի քանի մակդիրներ (օրինակ իմն երկրիս մէջ Հայոց տրուած և ընդհանրացեալ „Prost" "ՊՈՍՏ բառը)։

Ահա այսպիսի նախատալից բառերէն խրտուիլակի մը պէս ստկալով կ'ազատին իրենց Հայութիւնը, առանց այդ դատակնիքը գործածողաց դարձնելու։ Հուսկ ուրեմն երկրին քաղաքակիրթ սովորոյթից և ոսկեզօծ բարուց անձնատուր գոլով կը յանդգնին իսկ ծաղրել այս ծաղրելի "ՊՈՍՏ" Հայերը իրենց արիւնակից եղբարքը, թոռունք այն սիեզերահռչակ Հայ դիւցազանց, որոց զարմանահրաշ քաջագործութիւնքն ու անջնջելի անունները ընդհանուր Ազգաց պատմութիւնն ոսկեատառ արձանագրած է 'ի .յիշատակ ապագայ դարուց և 'ի պարծանս Հայութեան։

Այս Հայութեան դատապիտները հարկ էր. Այո՛, մարդացելոյն Աստուծոյ խարազանաւ 'ի տաճարէն արտաքսած առաքելոյ նման արտաքսել և Հայութենէ և կամ մեծն Աղեքսանդրի առ իւր հրամանուն այլ վատասիրտ զինուորն ըրած առաջարկն ընել. (փոխել անունը կամ սիրտը)։

Ցաւն հազար Ռումանաբնակ Հայոց մէջ մատով կը համրուին 'ի Ռուման հանգուցեալ Թէոդորոս Սողոմոնեանի անձի նմանողներ. որ.ք սիրեցին իւրեանց Եկեղեցին և զԱզգն. լացին նորա թշուառու-

թեանը վրայ և սփոփանայ ձեռն կարկառեցին 'ի մխիթարութիւն իւրեանց խղճալի ալիւնակցայ։

Իրայ այս վիճակին մէջ հարկ անհրաժեշտ էր որ «Դանուբ»ի պէս ազդատէր և անկողմնակալ թերթ մը երևան գալով ձաղկել ուզէր այս կործանարար անտարբերութիւնը, որ զնոսա մինչև մեռելութեան կ'առաջնորդէ։

Յոճախակի ուղևորութեամբս պատեհութիւն ունենալով Պուքրէշթ, Կալայ, Սուլինա քաղաքներն այցելելու և մերազնէից մասին ճշգրիտ գաղափար մը կազմած ըլլալու և այս օրեր 'ի Պրայլա Ջեր 4րդ թուոյն մէջ ներփակեալ յուցակ մը 'ի ձեռին ունենալով Ռումանիոյ Պրաիլա քաղաքի Հայութեան մի համառօտ նկարագիրն կը փութամ ընել։

Պրաիլա կը գտնուի Դանուբ գետի վրայ, շատ հին ժամանակներէ չինեալ. ունի 35–38 Հայ ընտանիք. բնիկ և եկք և 200ի չափ պանդուխտ բեռնակիրներ. 'ի սոցանէ կան որ գաղթած են Ռումանիոյ քաղաքներէ, տեղացիք շատ հին գաղթականներ են և կը կարծուին Անիի բեկորներն լինել. կան նաև Ռուսաստանցի, Պուլկարիացի, Կ.Պոլսեցի, և այլ աշխարհներէ գաղթած Հայեր, որք մեծ մասամբ տրհեստաւոր են. սրճարանապետ, սափրիչ են. մի քանի վաճառական և յանձնակատար. մի հատ ալ կայ ագարակատէր։

Բնիկ տեղացի Հայ ընտանեաց մէջ (անուամբ միայն) Հայերէն խօսիլն իր բացակայութեամբը կը փայլի, այլ անխտիր Ռումաններէն և տակաւ իմն Թրքերէն, գովելի է բնիկներէն Տիար Պէտարապետեան անուն սին. որ կը փայլի իր պատուով և հարըստութեամբը. կը հաւատան թէ տեղւոյս եկեղեցւոյ խղճալի վիճակը նկատողութեան առնելով մտադիր է ազգային նախանձախնդրութեամբ նորա բարեշարդութեանն օժանդակել 'ի յիշատակ իւր քեռորդի վաղամեռիկ Կարապետի և իւր աղնուազարմ ընտանեաց։

Ս. Եկեղեցին կառուցեալ է 1869 թուականին նախաձեռնութեամբ և առատաձեռնութեամբ հանգուցեալ Կ. Պոլսեցի Յարութիւն աղա Շիրինեանի, և նուիրեալ է Ս. Աստուածածնայ անուան. կը գտնուի քաղաքիս պողոտայի վրայ. «Մթրատա Կալաց» անուանեալ. ունի բարձրադիր զանգակատուն, և 'ի ճակատուն մի Կաթողիկէ. իւր ներքին և արտաքին չէնքը. համաձայն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ։ Ունի երեք պաշտօնեայ. մի քահանայ Արժ. Տ. Ստեփաննոս Կիւլիւմեան. միւսը դպիր և մի ալ հոգաբարձու. Մինաս աղա Անտօնեան՝ որ անձնուիրութեամբ կ'աշխատի 'ի պայծառութիւն եկեղեցւոյ. սա անխտիր տեղւոյս ազգայնոց համակրութեան արժանացած է իւր հեզահամբոյր բընաւորութեամբը։

Եկեղեցին չունի ս և է կալուած բայի այն հողէն որ տարեկան միայն 400 ֆրանք կ'արտադրէ. և այն տունէն ուր ընտանեօք կը բնակի. ծերունի Տէր Մարտիրոս քահանայ Անտօնեան 93 տարեկան. անդամալոյծ. սա բնիկ Պոլսոյ Սամաթիոյ թաղէն է. Արժ. Ստ. քահանայ Կիւլիւմեան կ'ստանայ 80 ֆր. ամսաթոշակ. և տիրացուն 30 ֆր. և եկեղեցւոյ այլ և այլ ծախքերը վերոյիշեալ Մինաս աղա դիմելով ազգայնոց կը հաւաքէ ամենամեծ դժուարութեամբ։

Աստ չ'կայ, փառք Աստուծոյ ուրիշ տեղեաց պէս կուսակցական երկպառակութիւնք։ Տեղւոյս թաղականութիւնը չէ նմանած ժողովրդի ընտրութեամբ կազմեալ խորհրդոց. Սահմանադրութիւնը որպէս Ռումանիոյ այլ քաղաքաց մէջ նոյնպէս և ատ ոչ հասկացող կայ և ոչ ալ հասկնալ կ'ուզեն. քուէի իրաւունք ունեցող անձանց ընդհանուր քուէարկութեամբ չէ որ կը կազմուի թաղական կամ հոգաբարձու, այլ մի քանի ինքնահրաւէր անձինք 'ի մի վայր հաւաքուելով ըստ քմաց կ'ընտրեն իրենց գանտիտան. և զայն հոգաբարձու կը չինեն։

(Կը շարունակուի)

ՄԵՂՈՒ

Կ.ՊՕԼԻՍ 9 ՓԵՏՐ. 1892

Մանարեր Էֆէնտիներ կարծես կը ճարակի տակաւ ազգային գործոց մէջ ալ. ընդհանուր մի թուլութիւն կը տիրէ ամեն կողմ, անկարելի կը լինի մեզ գուշակել այս մեռեալ վիճակի ինչ պիտի յաջորդէ։ Վարչապետ լինելու ընտիր յատկութիւններէն բացարձակ զուրկ Պատրիարք Աշըքեան կը շարունակէ ծծել Մաքրի–Քէյի բարեխառն օդը եւ չարաթական կեղծ անհանգստութիւններ պատճառանելով, բոցավառ կրակարանին դիմաց բազմած կ'երեւայ թէ կը ծիծաղի մեր քթին. ազգը ինչ կացութեան մէջ է. ժողովուրդը ինչ իղձեր ունի, եւ ինք ինչ պարտականութիւններ ունի ժողովուրդի ըղձից եւ փափաքանաց հանդէպ, իւր այս անշարժ ընթացք մտածել կուտայ մեզ թէ կամ ըմբռնելու կարողութիւն եւ կամ գործադրելու ոյժ կը պակսի իւր մտ. իւր ուղղութիւն որքան կարելի է հետեւցնել, «Նախ ես ապա Ազգը» նշանաբանն ունի, անմիտ մարդ, որ պատմութենէն, ապագայի դատաստանէն ալ չի սոսկար եւ գիտնալով հանդերձ քաջ կերպով թէ իւր անուն մթին ստուերներու տակ ողողեալ պիտի մնայ։

Գաւառներ զուրկ իւրեանց առաջնորդներէ. Արաբկիր անառաջնորդ գրեթէ, միեւնոյն ժամանակ Տիգրանակերտ, նմանապէս Կարին, նոյնպէս Վան, Տրապիզոն, Սամսուն, Եւրոպական գաղթականութիւնք (գլխաւորաբար Պուլկարիա եւ Ռումանիա) անհովիւ եւ դեռ շատեր, ո՞վ գարման պիտի տանի այս անբաղդ ազգի յաւերումն. Աշքեա՞ն. — ո՛չ, ո՛չ, նա չէ կարող բժիշկ դառնալ մի այնպիսի կեանքէ վերջ որ անցած է դատարկօրէն Արմաշի վանուց մէջ. մի այնպիսի կեանքէ վերջ որ սոսկ իսօսք կը պարունակէ։

Անկարելի է չ'յիշել Արմաշէ 'ի լոյս ընծայուած «ՑՈՑՍ» ամսաթերթը որ մինչեւ 1876 թուական չարունակուեցաւ նոյն ժամանակ Խորէն վարդապետ Աշքեանի իսմբագրութեան ներքեւ։ Այն քան երեսուն էջերուն մէջ որ հեղհեղէ գանգաղօրէն սկսան դուրս գալ մամուլի տակէն ամէն ինչ կրակ էր. հոն գրող գրիչներ հուր բոց կը ժայթքէին եւ Հային սեւ հորիզոն լուսաւորել կը հրգնէին գոգցես, թերթի սանձը Աշքեան վարդապետի ձեռք էր եւ հանրութիւնն պարունակութենէն կը հեռուցնէր թէ Պոլսէ 20 ժամ հեռուն մի ուղիղ գանձ ունէր, ապագայ Պատրիարքցու մի կար 'ի պատրաստի, որ մի օր չէ մի օր պիտի տանէր իւր յաղթանակ։

Հուսկ ապա 1888ի անգնդադղորդ գոռում գոչումներէ ետք Աշքեան յայողեցաւ բազմիլ Երեսփոխանական քուէի մեծամասնութեամբ եւ մի քանի խեղկատակներու ջանիւք սնմանն Վարժապետեանի աթոռին վրայ. Ազգը խաբուած լինելն կը հասկնայ. բայց ի՜նչ օգուտ. Արմաշի հրաշակերտն ծաղու արժանի մի անձնաւորութիւն էր, այդ կրակ ու բոց գրիչն արուեստական էր եւ մարելու հակամէտ, ամէն ինչ կեղծիք էր Արմաշի վանահօր մէջ եւ ազգը բնականարար պիտի տուժէր։

Տուժեց ազգը եւ տակաւին պիտի տուժէ եթէ մի քիչ ալ անտարբեր մնայ։

Արտատանմանի Հայ թերթերու մէջ բացորոշ կերպով իսկ ասա գաղտագողի զրոյցներ կը շրջին որոյ համեմատ Աշքեանի նպատակ Կաթողիկոսանալ է։ Զափազանցութեան արդիւնք չէ այս զրոյց, նոքա որ կը ճանչեն Պոլսոյ այժմու Պատրիարքը նոքա միայն կրնան հաւատալ թէ նորա ունայն խելապտուկ այդ բարձրութեանց ալ ձեռնամուխ լինել կրնայ ճգնիլ, եւ երեք տարուան ընթացքի մէջ ի՞նչ արաւ 'ի Պոլիս որ քան զայն գերազանց գործունէութիւն ցոյց տայ յէջմիածին, այդ փչապատ աթոռի վրայ բազմելով անպատուութիւն միայն կրնայ բերել նորա վերայ։

Եթէ մեր խոնարհ կարծիք հարցուի Կաթողիկոսական արժանաւոր մի ընտրելի ցոյց տալու իմդրոյն առթիւ, հեռի կուսակցական գաղափարներէ ոչ Աշքեան, ոչ Սեդրակեան, ոչ Երեմիա մամուռնիշ կ'անենք, հակառակ լաւագոյն նկատեցնուս զՍեդրակեան այդ երկուքի մէջէն, բանիրուն, արժանաւոր աշխարհականներ չեն պակսիր, եւ մեր եկեղեցական օրէնքներ օրինաւոր ընտրելոյ պակասութեան առթիւ աշխարհականի Կաթողիկոսացումն կ'արտօնէ։ Տիրող սեւ վեղարներ կտակած միայն կը ներշնչեն։

Ո՛չ Ռուսահայր. ոչ Թուրքահայր թող չարձակեն միմեանց դէմ չանթեր, արժանաւոր ցուցնելու համար այս ինչ կամ այն ինչ Եպիսկոպոսն. անակնկալ մի դէպք է յապուշ կրթելու համար տիրող կղերական մարմինն. զգացնելու համար թէ Ազգը կը ճանչէ ամէն ճանապարհ եւ գիտէ արժանն անօրինելու միջոցը։

Խորէն Արքեպ. Լուսինեան Օսմ. կառավարութեան անհաւատարմութիւն ցոյց տալով իւր մի քանի նամակներ ոստիկանութեան նախարար Նազըմ պէյի ձեռք անցած էր, երբ կը կոչէ զինքը հարցաքննութեան, Խորէն Սրբազան կը խօստովանի յանցաւոր լինելը եւ Վ. Սուլթանի գթութիւնը կը հայցէ պաղատանօք, եւ ներում կը շնորհուի. իսկ մեր Աշքեան Պատրիարքը Նարպէյ Սրբազանէ վրէժ առնելու նպատակաւ զինքը պաշտօնազուրկ կ'ընէ Պէյիքթաշի քարոզչութենէն, եւ նրա տեղ կը կարգէ Դեր. Տիմոթէոս Եպ. Սափրիչեանը։

Ով գիտէ երբ պիտի դադրինք. այնպիսի մթին ինդրոց վրայ գրելէ։ Ա.

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԵՒ ՌՈՄԱՆԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Բերկրութեամբ պրտի կարդայինք Պոլսոյ լրագրաց մէջ կեդրոնական խառն ժողովոյ պաշտօնական յայտարարութիւնը 'ի մասին ընտրութեան Դեր. Գէորգ Ծ. Վարդապետ Երեւանի յԱռաջնորդութիւն Պուլկարիոյ և Ռումանիոյ Հայոց, մեք արդի միակ ներկայացուցիչը լինելով իւր հովութեան շրջանակին հայոց մամլոյն, այս բարեյաջող ընտրութեան հանդէպ չեմք կարող անտարբեր գանուիլ ուստի կը փութամք շնորհաւորել Անոի փառանդի զաւակներին որ վերջապէս յետ իւրեանց բազմամեայ հոգաւոր զրկանաց վերջապէս ունեցան իրենց խնամատար մի օրհնող ձեռք։ Յիշելով այն բարեմասնութիւնները որոյմով օժտեալ է յիշեալ Դեր Հայր Սուրբը, կը յուսանք որ Պուլկարիոյ և Ռումանիոյ Հայ զաղութը պիտի գիտենայ օգտուիլ այդ բարեմասնութիւններէն որոնց մէջ միշտ աչքի զարնողներն են նորին Գերապատուութեան հեզահամբոյր բնաւորութիւնը, իւր Աստուածաբանական և լեզուագիտական ու ուսումնական հմտութիւնները որոնցմով փայլած է միշտ ամէն պարագայներու մէջ և փարձերը ցոյց տուած է թէ՝ իրեն պարբերական այցելութեանց մէջ թէ Երուսաղեմայ Ս։ Յակոբեանց ժառանգաւորաց վարժարանի տեսուչ լինելովը. թէ նոյն վանուց վանական Պատկ. խորհրդոյ Ատենադպրութեամբը և թէ այլ և այլ ուրիշ պաշտօնները մէջ, ասոնցմէ զատ ինքը արդէն իւր ծննդեամբ Անոի սերունդներէն լինելով այժմէն հաւատիք մը կը ներշնչէ մեզ որ սովորականէն տարբեր եռանդեամբ պիտի հովուէ իւր խնամոյ յանձնուած ժողովուրդը։

ՏԵՂԱԿԱՆ

Հինգչաբթի Ս. Վարդանայ ծոնի առթիւ տեղւոյս Եկեղեցեայ եւ վարժարանի մէջ բաւ սովորութեան հանդէս կատարուեցաւ։

Նոյն երեկոյ տեղւոյս նորակազմ ընթերցասիրաց ընկերութեան կողմանէ ալ «Աւերումն Անւոյ» ողբերգութիւնը ներկայացուցին 'ի նպաստ սոյն ընկերութեան. գոհութեամբ լսեցինք թէ՝ հասոյթը գոհացուցիչ է եղած,

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԹԹԻՆՃԻԷՖ

ՐՈՒՍՃՈՒԿ ՏՊԱՐԱՆ Մ.Ս. ԹԻԹԹԻՆՃԻԷՖԻ
Скоро-печатницата на Спиро Гулабчъ.